

Տարեկան պինը 10 բույժ, կես տարվանը 6 բույժ:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն կամրադրատան մէջ.

Յարարարարացիր գիտում են ողորակի
 Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբադրատունը ըստ է առատ օտեան 10—2 ժամ
(Քաջի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարում իւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարու Կինների Կամույ. զնարում էն
Խրաքանչյուր քստին 2 Կուպէկ:

UNIL

ԲՈՎ ԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հըբաների ջարդը:—Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ
Նամակ երևանից: Ներքին լուսեր:—ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ: Միջազգային կոնֆեդերացիա: Խա-
լիս: Նամակ Գեղարքայից:—ԽԱՆԸ ԼՈՒՐՆԵՐ:
ՀՀՆԱՍՔԻՆԵՐԸ: ՅԱՅԱՏԱՐԱՌԹԻՒՆՆԵՐ:
ԲՆՀՆԱՍՒՐԱԿԱՆ: Դաւիթ բէկ:

ՀՐԷԱՆԵՐԻ ԶԱՐԴԸ

վերջին օրերը Ռուսաստանի մի քանի տեղերում կատարված հրէաների ջարդը առիթ է տալիս մայրաքաղաքների ռուս մամուլի ազատամիտ մասին յիշել այն իրողութիւնը, որ ռուս հրէաները բացառական օրէնքներին ենթարկվելով, տարօրինակ բնաւորութիւն են ստացել:

Հրէաներին արգելված է մշտապէս բնակվել ամբողջ Ռուսաստանում, բացի եւրօպական Ռուսաստանի Հարաւային Նահանգների մի քանի տեղերից: Մի և նոյն ժամանակ նրանց արգելված է գնել հողային կալուածներ: Այդպիսով Հրէաները մի տեղ են խտվում, առանց միջոց ունենալու ցրվելու Ռուսաստանում, առանց միջոց ունենալու բացի մանրաթափառութեան, գինեգործութեան և վաշխառութեան, ուրիշ և է գործերով պարապելու: Հրէայն առջև բաց չէ այն բոլոր ուսումնական, պետական, հասարակական գործունէութիւնների ասպարէզը, որ բաց է քրիստոնեայ դա

Լանուժեանը պատկանող ռուս քաղաքացու
առջև:

Իր բացառական դրուժեան շնորով հրեան գարձել է վաշխառու և հարստահարիչ։ Սորան աւելացրէք ռուս ամբոխի տգիտութիւնը և մոլոսանդութիւնը։ Գիւղացին պէտք է պետական կամ համայնքի հարկը վճարի։ Նա փող չունի և դիմում է ռուս կամ հրէայ վաշխառուին մեծ տոկոսներով նրանցից փոխ առնելով մի յայտնի գումար։ Բայց քրիստոնեայ հաստափոր վաշխառուն ինչքան էլ հարստահարի մուծիկին, սա այն աստիճան վրդոված չի լինելու, որքան հրէայի դէմ, թէև երկուսն էլ միատեսակ խոշոր տոկոսներ են վստահում, որովհետև մէկը քրիստոնեայ է, իսկ միւրս հրէայ։...

Բացի սորանից, «Գոյօս» լրագիրը ուշադրութիւն է դարձնում և այն տիրապէս երևոյթի վրա, որ վերջին տարիները ուսումնական խաւարատէր մասը իր յօգուածներով անընդհատ աշխատում էր գրգռւածութի մոլեւանդութիւնը հրէաների դէմ Այդ խաւարատէր լրագիրների ասածումն անաջողութեան, ամեն տնտեսական տառապանքի մէջ մեղաւոր էին հրէաները ժողովուրդը սփռեց, ընտելացաւ ումն դիպուածում թափել իր գգգհոյթիւնը հրէաների վրա, ամեն իր գգգաղգուլթեան մէջ նրանց մեղադրել:

Ահա այն ծառայութիւնները որ մատու-

ցանում են խաւարասէրները իրանց ազգին
և ինչ հետևանքի կարող է հասցնել մո-
լեռանդութեան պրօպարանդան:

Q. U.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Մարտի 25-ին
Տալալեն 81 թուականը չը կոխած՝ ինքս ին-
ուխտել էի որ զոնե չարաթը մի նամակ ուղար-
կեմ «Մշակի» ընթերցողներին՝ տեղիս կեանքին
վերաբերեալ, և կարծում էի միանգամայն ուն-
տասպա՝ լինել, Բայց այս թուականը, տարաբաղ-
դարաբ, ինձ վրա ուրիշ ազդեցութիւն ունեցաւ,
հրեւով իմ առաջ՝ քարոյական և նիւթական ար-
դեւեղութիւնը:

Զիւմ կամենում բացատրել այդ երկրորդն ար-
դեւաւթիթեւրի պարագաները, այլ կամենում ես
ասել որ եթէ դրանք չը լինէին, ես յուսովար-
մինքն այսօր չառ տեղեկութիւններ ճշդորդա-
կը լինէի, որովհետեւ նիւթի պատկանութիւն չ
կըր

Այլքիս առաջ կատարվում էին ուրախ ու ար-
խուր իրողություններ, օրինակ՝ հինգ թէ վե-
մարդասպանություն, քանի մի աւազակություն
ծառայողային անհատարմունքներն և ներգո-
թիւն, վարդանանց յիշատակին համեստ հան-
դիսակատարություն, բարեգործական նպատակ
ներկայացումներ և նուազածություն, հրապարա-
կական յաշխոյակ դասախոսություն, թեմական
դպ. հոգեբարձութեան մէջ կատարած փոփո-
խություններ, քաղաքային վարչութեան մէջ վճռա-

բայց չը կարողարած կարեւոր խնդիրներ, եկեղեցական երեսփոխաններին ձեռքով կատարած աշխատանքները, մարդիկ գողտթիւններ. Վկատարար կայսեր ողբալի մահուան առթիւ եղած հոգեհանգստեան պաշտօնները, այս մասին՝ Նորին Վեհփառուհի կանն կողմից ուղարկած եպիսկոպոսներին արտաուշ քարոզները. նոր Գահակալին հաւատարարիմ մնալու երդման հանդէսներ և այլ առթիւ նորին գերագահացութեան կողմից արաւ կարգադրութիւններ որ՝ ամեն մի կրօնի պատկառանքները երդուն իրանց եկեղեցում, բայց զրան հակառակ՝ և ի գայթակղութիւն հասարակ ժողովուրդան, մեր մի քանի երես լի հայեր երկրորդ ռուս եկեղեցում. այս առթիւ եղաւ սրտուռնները ժողովուրդան կողմից և այլն այլն:

Ոչնչաձի միա չարժէ խօսել, կասե՛ք դուք, հա
մաճայն եմ. ներկայս էլ առատ նիւթեր
տալիս մտածելու, գրելու. և միշտ գրելու:

Չը նայելով որ հանգամանքներս չեն ներու
աւելի բազմադիմի գիտել ընթացիկ գործերը
այնու ամենայնիւ՝ լաւ է գրնէ՝ մի բան ատե
քան թէ՛ բուրբուլին չասել ոչինչ։ Եւ առհասարակ
թափ չեմ սիրում այն մարդիկն, որոնք սով
բուլթիւն ունեն միշտ վառը տեսնելու և զէջ
դիւրու. որոնք չափազանց բծախնդիր ու մանրակ
կիտ են իրանց գործերի՝ մէջ։ Ընդհակառակ
ցանկանում եմ ես որ զրաժս լինի աւելի նկա
րագիր եղելութիւնների էական մասների, քա
թէ մանր զէպքերից հանած եղբակացութիւններ
յնձ աւելի զիւրութիւն և բաւականութիւն հ
տակոյ այն յօգուտները, որը նկարագրե
լինում առաքինութեան, բարոյականի, քան թ
վատութեան, չարագործութեան։ Եւ այս չա
հասկանալի է։ Չարագործութիւններ յայտն

ԴԱՆԻԹ ԲԷԿ

(1722—1728)

g.

Տաթևի վանքը կառուցված էր նույն անունով աւանի մօտ և սկսեալ 896 թւից գոյութիւն ունէր: Շաղառաց վանքից յետոյ Տաթևը ակտուալ նիստ եղաւ Սինեաց արքեպիսկոպոսների, որոնք այլ անունով կոչվում էին միտրապօլիտներ: Տաթևի միտրապօլիտները թէև ճանաչուէին Էջմիածնի Էպիսկոպոսի գերեզմանոցովը, բայց մի և նոյն ժամանակ իրանց առանձին շաղառ կառավարութիւնն ունէին:

Վանքը շինված էր լեռնային դժուար մաս-
նիլ բարձրաւանդակէ վրա, շրջապատած աշտա-
րակներով և ամուր պարիսպներով, որոնք դըր-
սից նրան աւելի մի անառիկ բերդի նմանու-
թիւն էին տալիս: Նրա ստէկից ընկած էին ան-
դունդի նման խոր և մթին ձորեր, որոնց մէջը
գտնալով, որոտալով անցնում էր Որոտա-
դետը: Շրջակայ բոլոր լեռները, որոնց սու-
րագգթները կորչում էին ամպերի մէջ, պատ-
էին խուռ, անանցնելի անտառներով: Գեպ-
վանքը տանող ճանապարհները ընկած էին նե-
փապարների, սարսափելի կիրճերի մէջով, որտե-
ղից մի ամբող միայն կարող էր անց կենալ: Ս-
յիսուն հրաշալիաստոր բաւական էր կանգնելու
մի որ և իցէ բլուրի դիմին, որ թոյլ չը տայի
մի ամբողջ լեզուին մուտք գործել դէպի վանքը:
Գուցէ վանքի այդ անառիկ զրոթթիւնը,
պաշտպանված էր բնական ամրութիւններու
պատճառ տուեց տեղափոխել այնտեղ Սինեան
աշխարհի արքեպիսկոպոստութիւն անայր Եթով-
թամանակի փոթորիկներից անվտանգ պահա-
նամար:

Վաւիթ բէկի օրերում այստեղ կային՝ մի ալ
Կայսկոպոս, տասն և երկու Կայսկոպոսն:

քան և չորս վարդապետներ: Վասքը ունէ
չառ զիւղեր, ագարակներ, ընդարձակ անտառ
ներ, լայնատարած արօտամարդեր և ուրիշ շա
կալուածքներ, որոնք ընծայված էին Ալեւեա
կառնանքներից, իշխաններից, իշխանութիւններից
ևս: Դրն էր ինքը միաբանութիւնը:

Վարդանանց տունն էր: Վանքի մէջ կա
տարրում էր Աւարայրի դաշտի նահատակ
ների հոգեհանդիսը: Տաճարի մէջ, սեղան
հանդէպ, դրած էր մի դազազ, որ ծածկված է
ուկեհուռ դիպակներով: Երեք մոմեր արծաթ
աշտականների մէջ լուսւաւորած էին դազազը
Նորա վրա դրած էին՝ մի խաչ, մի աւետարան
մի քանի հատ սրեր: Երեսուցի վարդապետը

Սեդակյանի վրա մատուցվում էր սուրբ պատա-
րադր: Ինքը վանահայրը՝ Նեքսես արքեպիսկո-
պոսը պատարագիչ էր: Վանքի ամբողջ միաբնա-
հույթիները, զարդարված թանկագին զգեստնե-
րով, սպասաւորութիւն էր անում սուրբ խոր-
հորդին:

Նահատակի զագաղը շրջապատել էին Սխանեաց աշխարհի նշանաւոր աւագները։ Նշանաւոր մէջ կանխած էր Վաւիթ բէկը Մխիթար սպարապետի և իր միւս ընկիւնները հետ։ Տաճարը լիք էր բազմաթիւ խումբով։ Վանքի բակով նոյնպէս անցնող տեղ տեղ չը կար։ Վանքի դուռը, շրջապատած էր բազմաթիւ կամաւոր զինուորներով։

Մերձակայ գիւղացիները ամբոխով։

Պատարապի խորհուրդը աւարովելուց յետոյ և կիզեցակաւ դասը կատարեց հոգեհանգիստը և երբ ամեն ինչ վերջացած էր, Ներսէս արքեպիսկոպոստոսը խօսեց իւր քարոզը։

«Վլաստեղ ձեր աչքի առջև դրած է մի դա
գադ, — այսպես սկսեց իր քարոզը, — դա Վարդա
նի դագաղն է։ Զեղանից ամեն մէկը դիտե, թե
ով էր Վարդանը։ Բայց գուցէ չատենը չէր դի
տեն։ Թէ ի՞նչ էր Վարդանը։ — Վարդանը մի ա
բողջ ժողովուրդ էր. Վարդանը այդ ժողովու
րդի ամենաբարձր լուսնի էր։ Բոլորը բռնաթի
րէմէ։ Բոլորը՝ անարդարութեան դէմ։ Բոլորը՝ ա
նպատուրեան դէմ։

«Մեր պատմութիւնը տուն է միշտ շատ նշանաւոր մարդիկ: Մենք ունեցել ենք Հայկ, ու Եփրատնեանի հետ էր պատերազմում: Մենք ունեցել ենք Արամ, որ սպանեց ասորաց արքան: *) Մենք ունեցել ենք Տիգրան, ու ջնջեց վիշապները ցեղը: Մենք ունեցել ենք մ. ուրիշ Տիգրան, որ ջարդում էր Լուկոկոսոսի ու Պոմպէոսի լեգէոնները: Մենք ունեցել ենք ուրիշ շատ հերոսներ, բայց դրանցից և ոչ մէկն էլ արդան չէ կարող լինել:

«Այդ քանի՜րի հետ միացած էր զօրքը, այն-
ինքն վարձկաններին մի դասակարգ, որոնց գոր-
ն էին ածում շատ անդամ աննպատակ աշխատա-
կալութիւններին մէջ, միայն իրանց դրօշի փա-
ռը բարձրացնելու համար: Զօրքը արիւն էր թա-
փում, իսկ նրանք փառք էին վայելում: Զօրք
հողեր էր տիրում, բայց նրա որդիքը քաղցած
էին մնում, արդիւնքը չապշուտ էր գօրծի տէր-
ւորներին: Բայց Վարդանի անձնաւորութեան մէջ մի-
շտ էր ժողովուրդը: Նրա փառքը ժողովրդի
էր պտուականութիւն: Վարդան—ինքը ժողովուրդ
էր:

«Նրա հետ միացած էր կզերը, մի ձեռքով խաչ՝ միւս ձեռքում ոտը բռնած: Նրա հետ միացած էր շինականը, մի ձեռքում բաճ՝ միւս ձեռքում նիզակ բռնած: Նրա հետ միացած էր ագուռականը, քաղաքացին, և որ՝ ամենազլիս առյուծ է՝ հաչ կնիւր:

«) կեսալ նախարարների չբեղ դաշխմանը, մինչև դեղական աղբառ խրճիթը, զարթնի ազատասիրտթեան վառմ հողին: Զարթնեց հայ կինը: Նա իր հրեշտակային կենսատու չը չով աւելի վառեց, աւելի բոլբոբեց ժողովրդ եռանդը: Նա թողեց իր պաճուճանքը, մոռացեց իր վափկութիւնը և սովորեց տանն զինուոր կենսելի խոտութիւններին: Քանդազին բռնեց ներկ, նուրբ կերպաների փոխարէն զգեց

*) Ասորոց զիւցաղը, որին սպանեց Սքանկոյնում էր Բար-շամ. նա համարվում էր արորդի, և Բար-շամ բառը ասորոց լեզուով այդ նշանակում:

պատերազմող մարդու կոչող հագուստը։ Ոսկե
հուռ մարդաբախների փոխարեն նա իր կուրծքը
դարձրեց երկաթե դրահով։ Գոհարեղեն պսակ
փոխարեն նա իր գլխին դրեց պողպատեայ սա
ղաւարտը։ Ոսկե մատառներին փոխարեն կրե
ստը, լուսան, նիզակ։ Վժին ինչ տուեց նա, ա
մեն ինչ զոհեց հայրենիքը փրկելու համար։

«Երբ կիրք խառնվում է գործի մեջ, դա նրա ջանդուղիքն է ամենապարզը նշանն է, Հայ կինը չարժեք, սգեարեց, ոտքի կանգնեցրեց ժողովրդը։ Երբ դասակարգերը։ Իսկ Վարդանը այդ դասակարգերի միակերպ շարժ, նրանք միմեան հետ կարգի օղակը դրանք։»

«Վարդանը ժողովրդի հոգու արտայայտու
թեան ծնունդն էր: Բայց ինչ էր ժողովրդի պա-
շտօնը. ինչ նպատակ ունէին նրա հոգեկա-
ն ձգտումները:

«Հայաստանը իր օրհասականի մէջ էր դառնում: Արշակունցիսց հզօր պետութիւնը զոհ էր գնացել Տիգրանի նահապետներ, Ռոմեոյ թագաւորներէի զահը խորտակված էր. նրանց փոխարէն տիրում էին պարսիկ մարդասպանները, Սուրբ Գրիգորը Լուսաւորէի հայրապետական օրհնական ներկայացուցիչները վերջացրած էին: Պարսիկը իր պիղծ ձեռքը տարածել էր մինչև եկեղեցւ սրբարանը: Քրիստոսի հօտը մնացել էր առանց անձնատուէր հովուապետի: Ներսէս մեծի, Սահակ Պարթեի, Արիստակէսի և Վրթմանէսի աթոռի վրա պարսիկները նստեցնում էին Սուրբապիկ, Շըրուէէն, Բըրքիշլիս ու զրան նման արքայադուներին:

«Ընանգուռն մնացել էին միայն հայոց նախնային բարեքերը: Դրանք, որպես հայրենիքի բոլոր ծախքերով լի իրանց վրա կրող սիրներ, դեռ պահպանում էին կործանված Հայաստանի մնացած փշրանքները: Պարսկական նենգությունը սկսեց աչք հեցողներին ևս տապալել, նրանց ևս խռովել, որպես զի սպողային չէին միանգամայն քանդվում: Երբեք, Հայաստանը թողնում է հայ զինուորիկի թափված, հայ նախարարից զուրկ իսկ նրանց երկար տարիներով ուղարկում է

(Կը շարունակվի)

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Մինչև այժմ չեղած ԱԿԱՆՔԻ ԻՒՂ ԲԺԻՇԿ
ՀԱՐԻՏԻ, որ կատարելագործված է բժշկի ՄԱՎՐԻ-
ԿԻՒ ԴԵՅԶԻՑ: Առողջացնում է ամեն տեսակ խո-
լով-թիւն, եթէ նա բնական չէ: ԵՐԵՎԱՆԻ ԸՆ-
տանալուց յետոյ ուղարկվում է ՄԻ ՀԻՇԿ այդ խղից,
մանրամասն խՐԱՏՆԵՐՈՎ, գործածութեան մասին: Այդ
խղը կարելի է ստանալ Պետերբուրգի բոլոր ԴԵՂԱՏՈՒՆ-
ՆԵՐԻՑ և ԱԷՔԱՆԿԵՐ ՎԵՆՅԵՆԱՆ, Կազանիցայ
փողոց № 3: 48—52

Չը նայելով մարտի տեղանայուն ապրանքները առաջիկայ գներով կը ծախվեն:
ԿՈՆԳՈՐԵՑ 1 ը. 5 Կ. և 1 ը. 10 Կոպ., շատ լաւ: ՄՕՆԻՆԳ 1 ը. 20 Կ. և
1 ը. 40 Կ., Հիանալի ԿԱՅՍԱՌԻ 1 ը. 60 Կ. և 1 ը. 80 Կ. և ԱՄԵՆԱԼԱԻ
ԹԵՑ 2 ը. առանց թղթի: Անգլիական ըէֆօլիւրներ 4 ը.—40 ը. և հրացաններ 20
ը.—200ը. Անգլիական խանութի մէջ: Գործակալութիւն ԲԱՐՆԱՐԻԻ ԹԱՄԲԵ-
ՐԸ, չնածիւ կՈՂՊԵՔՆԵՐԸ, Տուրքի ԳՐԻՉՆԵՐԸ և էկտրակտ կակաո-
շօկոլայի ծախելու համար, որոնք վարելի հանգիսի ժամանակ ուկէ մեղալ ստացան:
ՀՈՏԱԻՔՑ ԹԵՑԻ ՖՈՒՆՏԸ ՊԱՏՈՒԱԿԱՆ ԹԵՑԱՄԱՆՈՎ 1 ը. 65
Կ. և ամենալաւը 2 ը. 30 Կ.: Վաճառականներին օգտաւէտ է մեծ քանակութեամբ
ապրանքներ առնել Անգլիական խանութի մէջ: Ամբողջ հաղուստ 15 ը., կօնֆետներ
հազի դէմ 60 Կ. ֆունտը: 63—100

Դուք եկաւ մամուլի տակից և կաճառվում է «Կենտրոնական» և պ. Զ. Գրիգորիանցի «Կովկասեան» գրաքննադատներում «Մտաւոր, ֆիզիկական և բարոյական ինքնակրթութեան մասին» հեղ. Զօն Մալաթա Բէկկի. թարգմ. Գրիգոր Շահրուբադեանի. գինն է 60 կոպէկ: Օտարաբարձացիք կարող են ուղղակի թարգմանել իրենց այս հասցէով: **Въ Тифлисъ, Учителю Армянской Духовной Семинаріи Нерсисянъ, Григорію Шахъ-Будагянц.**

Տպագրութեան համար բոլորովին պատրաստ է թարգմանչի հետեւեալ աշխատութիւնը: «Մայրական Գաւառականութիւնը, բնութեան օրինաց վերայ հիմնուած» հեղ. Ժ. Բամբասանի:

Վերականգնեցնող ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ, մազերը ամրացնող և նրանց բՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ վերադարձնող: Գինը 2 ը. շէշը: **ՓՈՍՏԱՅՈՎ** ուղարկված 2 ը. 49 կոպ.: **ԱՆԳԼԻԱԿԱՆ** խանութի մէջ:



Մի և նոյն տեղը **ԽԻՆԱՅԻ ԻՒՂ**, մազերը ամրացնող համար, 1 ը. ամենը վրձին գլխաւոր դէմ, **ՏՈՒԱԼԵՏԻ ՍԱՊՈՆ** և հոտաւէտ ջրեր և այլն: **59—100**

ՎԱՃԱՌՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՆ ԳԼԻՍԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԵՋ կը ծախվեն: վարտիքներ 4 ը., ամբողջ հաղուստ 14 ը. և աւելի, տրիկո և պարուսի նա 75 Կ. արշինը: Նոր ձեւի հրացաններ 45. ը. 60 ը. և 100 ը., ըէֆօլիւրներ 4—40 ը., գլխարկներ 1 ը., թամբեր 30 ը. և աւելի, կօնեակ առաջին տեսակի 2 ը. շէշը, հին պօրտ-վէյն և խերես 1 ը. 40 Կ., շամբ պայն գինի 3 ը., կօնֆետներ 35 Կ. ֆունտը, շօկոլայ-ֆրայի 1 ը. 20Կ. անգլ. ֆունտը և թէյ առանց թղթի 1 ը. 60 Կ. ֆունտը, ամենալաւը Մօսկվայց 2 ը. 20 Կ. թղթով **ՄԻԵԻՆ ՈՅՆ ՏԵՂԸ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ** մաշակային, մատուցարաններ, կողպէքներ, դանակներ, գդալներ, գրիչներ, թուղթ, կէտնիկ, ձիասանար, վրձին, ամաններ, բաժակներ, մուրաբաներ և այլն 30% աւելի էժան, քան թէ ուրիշ խանութներում:

ՄԻՆԶԵԻ 1831 ԹՈՒԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ ՎԵՐՋԵՐԸ ՇՈՒՇՈՒՄ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԵՆ ԱՅՍ ՎԵՑ ԳՐԲԵՐԸ:

- 1) Երկու մանրավէպ. Արֆօնս Գօրէից թարգմ. Ն. Տէր-Աւետիքեանի, գինն է 15 Կ.
 - 2) Պօյնանու ռուսացի օրագրից, թարգմ. Տ. Նազարեան: 20 Կ.
 - 3) Պարսկ ժամեր, ինքնուրոյն բանաստեղծութիւններ: Ն. Տ. Աւետիքեան: 25 Կ.
 - 4) Հանապարհորդութիւն Ղարաբաղում, Ա. ցախեցի 30 Կ.
 - 5) Ծաղիկ և ծաղկահատութիւն, թարգմ. Տ. Նազարեանցի: 15 Կ.
 - 6) Քնար խօսակ, բանաստեղծութիւններ Ն. Տ. Աւետիքեան: 50 Կ.
- Այս վեց գրքի գինն է միասին 1-50 կոպէկ: Աւանձին մէկի համար բաժանորդագրութիւն չէ ընդունվում, բացի «Քնար խօսակից» որի համար աւանձին կարելի է ստորագրել և ֆինանսալ հինգը աւանձին: Հրատարակիչ Տիգրան Յ. Նազարեան:

Ռուսիոյ Ամերիկայի տաւարական մագաղիւմում, ծախվում է, Աւստրիայի բիպնի գիրանդիք (կօսաներ) հարիւր հատն 55 ռուբլիով: Կօրցոցայա փողոց գալէրէյ Արծրունի:

3—10

144 Արծրունու գալէրէյ 144
ամենաէական պահեստ
մարկի և հաշիւների:

Въ Редакціи газеты
«МШАКЪ»
Продается
„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ
ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“
Д. Григорія АРЦРУНИ.
Брошюра напечатана въ Москвѣ.
Цѣна 25 коп.

Մամուլի տակից դուք եկաւ և կաճառվում են Կենտրոնական Գրաքննադատներում:

1. Հայր և Հայաստանը օտարների աչքում, հրապարակական դաստիարակութիւն ընթերցումը թիֆլիսի ժողովարանում Արգար Յովհաննէսեանի. թիֆլիս, 1881 թ. գ. 30 կոպ.
2. Նոյն տեղը կաճառվում են:
3. Միութիւն Հայութեան, Բանաստեղծութիւն Մաղաքիայ Ծ. Վարդապետի Օրմանեան, արտասանեալ ի խորանի կրթաբարձր ընկերութեան Յիւսիւստօր ի 17-ին նոյեմբերի 1879 թ., Կ. Պօլիս գ. 45 Կ.
4. Տեղեկագրութիւնը ի փոքր և ի մեծ Հայ Զ. Ներսէս Սարգսեան Միութեան վարդապետի, Վ. Կենտրի գ. 4 ը.
5. Ստորագրութիւն հին Հայաստանեայց Հ. Ղուկ. վարդ ինձիճեան ի Միութեան Միաբ. ըստ հին և ըստ միջին դարու անուանեալ ժամանակաց ի Վ. Կենտրի գ. 5 ը.
6. Պատմութիւն Արիստակէյ վարդապետի Լաստիվրդցի, Վ. Կենտրի գ. 1 ը. 50 Կ.
7. Մեծին Գրիգորի Առաջնոյ Սրբոյ Քահանայապետի կանոն Հովուական, Վ. Կենտրի գ. 1 ը. 50 Կ.
8. Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի Յաճախապատում ճառք և աղօթք, Վ. Կենտրի գ. 2 ը.
9. Հաւաքումն Պատմութեան Վարդանայ վարդապետի լուսարանեալ Վ. Կենտրի գ. 2 ը.
10. Տեղեկագրութիւն Հայոց Գաղթականութեան Ուղղվարութիւն յամի 1876 Արշակայ Մ. Արթուրեան Ֆօքշան գ. 1 ը. 20 Կ.
11. Սոգ. Կենտրի Բերթուստ ի Մահն Արեւի, թարգմանեալ Տիգրան Հ. Մանուկի Վ. Զարեանեան ի Միութեան միաբանութիւնէ, Վ. Կենտրի գ. 1 ը. 75 Կ.
12. Առաջ Միութեան Գօշի, Վ. Կենտրի գ. 1 ը.:

Նոյն տեղը ստացուել են մեծ քանակութեամբ Զատիկ տօներին նուիրելու զանազան հասակի մանկանց ընթերցանութեան համար փառակազմ գրքեր, ֆրիբերեան խաղեր, նկարազարդեալ ռուսական պատկերներ և այլն:

Օտարաբարձացիք ճանապարհի ծախք են վճարում 10% առանց փողի պատուէրները չեն կատարվում:

Ա Ն Գ Լ Ի Ա Կ Ա Ն Մ Ա Գ Ա Ջ Ի Ն Ո Ւ Մ									
Համ. մասեցէք թէյի ֆունտը	1 ը. 5 Կ.	Մօսկվայից բերվող թէյի հետ	Ֆ. 1 ը. 30 Կ.						
—	1 ը. 10 Կ.	—	—	—	—	—	—	—	—
—	1 ը. 20 Կ.	—	—	—	—	—	—	—	—
—	1 ը. 40 Կ.	—	—	—	—	—	—	—	—
—	1 ը. 60 Կ.	—	—	—	—	—	—	—	—
—	1 ը. 80 Կ.	—	—	—	—	—	—	—	—
Ամենալաւը	2 ը.	—	—	—	—	—	—	—	—
									74—100

ԻՆՉ Է ՊԱՏՃԱՌԸ ՈՐ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱԳԱՋԻՆԸ ծախվում է այժմ այնքան մեծ քանակութեամբ թէյ և այլ ապրանքներ: Որովհետեւ այդ մաղաքները ստանում է թէյ ուղղակի պանտոններից, առնում է բոլոր ապրանքները ուղղակի գործարաններից և բաւականաւում է փոքր շահով: Այդտեղ կայ սովորաբար 50,000 ֆունտ թէյ առաջին տեսակի, կակաո և շօկոլայ-ֆրայ, մուրաբա և կօնֆետներ 25% աւելի էժան, քան թէյ ամեն տեղ, անկողիններ, հրացաններ, ըէֆօլիւրներ, կողպէքներ, մատուցարաններ, ա, մաններ, դանակներ, գդալներ, թէյամաններ, բաժակներ, թամբեր, գուլպաներ կանանց և տղամարդկանց, թաշկինակներ մականոցներ, կալնիկօր, թուղթ, մատիտներ, տետրակներ, գրիչներ ամեն ձեւքի համար և այլն, 20 մինչև 40% աւելի էժան քան թէ ուրիշ տեղ: Արծրունու գալէրէում: **100—89**

ներ 4 ը., ՄԱՆԿԱԿԱՆ ՀԱԳՈՒՍՏՆԵՐ 1 ը. տղամարդկանց 14 ը., ԳԼԽԱՐԿՆԵՐ 1 ը. արշ., մականոցներ 6 ը., հին պօրտվէյն և խերես 1 ը. 20 Կ. շէշը, կօնիակ առաջին տեսակի 1 ը. 75 Կ., ՊԻՍԿԻՆ 50 Կ., թէյամաններ 25 Կ., ՊԱՏՈՒԱԿԱՆ ԹԵՑ 1 ը. 40 Կ. առանց թղթի: Ծախվում են ԱՆԿԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԵՋ: ԱԼԲՈՒՆԵՐ շատ էժան: **5—15**

ՇՈՒՏՈՎ ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ ԿԸ ՄՏՆԻ
«ԷՍ ԷԼ ԻՄ ՍԱՋԸ»
անունով գիրքը, որ պարունակում է իր մէջ 90 գեղա լոյս չը տեսած բանաստեղծութիւններ:
Օտարաբարձացիք կանխիկ մէկ ռուբլու գումարով, գինում են ուղղակի հեղինակին հետեւեալ հասցէով:
«Чрезъ Просковейское Почтовое отдѣленіе въ городѣ Святаго-Креста (Славянольск. губ.). Учителю Семѣю Сафаріанц.»

Արդէն կաճառվում է
ԻՆՉ ԲԱՆ Է ԺԱՆՏԱԽՏԸ
Ինչ բանով կարելի է փրկուել նորանից և այլ տարափոխիկ տկարութիւններից: Ժողովրդական և հասարակաց մտաշէլի խրատ բժշկի Պ. Ա. Իլիւսկոյ:
Թարգմանութիւն Ա. Ս. Գուլամիրեանց գինն է 15 կոպ. 100-ներիով գնողներին զեւում կը վրի: Մեր հասցէն՝ **Въ Эривань А. Гуламирянц**